ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ <<Երևանի Հ.Կարապետցի անվան հ. 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի «ՆԶՊ» առարկայի ուսուցչի / 6 դասաժամ / և տեխնոլոգիայի 2 ուսուցչի / 9-ական դասաժամ /, ֆիզկուլտուրայի / 25 դասաժամ /, ռուսաց լեզվի ուսուցչի / 8 դասաժամ / և քիմիայի ուսուցչի / 8 դասաժամ / թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում /Ձև 1/՝, մեկ լուսանկար 3×4 չափի
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4. Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/
5. Ինքնակենսագրություն /Ձև 5/,
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ:
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 11-ին՝ ժամը 13:00 - ին, Երևանի Հ.Կարապետցի անվան հ. 6 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք.Երևան,Նոր Արեշ 5փ, 2/3 շ:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /010/ 45-38-00 հեռախոսահամարով: